

Ք Ս Ա Ն Ե Ր Ր Ո Ր Գ Տ Ա Ր Ի

Մ Շ Ա Կ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան միջ.

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ր Գ Ի Ր Գ Ի Ր Ա Ր Բ Ր Ո Ւ Ն Ի

Ն Ե Ր Կ Ա Յ 1895 Թ Ի Ս Վ Ա Ն Ի Ն

Մ Շ Ա Կ

23-րդ ՏԱՐԻ

23-րդ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղությամբ և ամբ: Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., հոթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿ» գրվել կարելի է ՌՄԲԱԳՐԱՏՆԵՐ (Բաղադրայա և Բարձրագույն փողոցների անկիւն): Կայտարարութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գիտնել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK»:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Մամուլի կարծիքը հայոց հարցի մասին. Ակա- նասեանի կարծիքը.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կով- կասեանի համարարանի հարցը. Մասնագործ- թիւն. Հայոց թարգման. Նամակ Երևանից. Նա- մակ Գորիսից. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵ- ՍՈՒԹԻՒՆ.— Նամակ Թիբեթից. Նամակ Թիբե- թիայից.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ԲՈՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒ- ԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. ՄԻ ԳԻՏ ԳԿԱՏՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆ:

զիցիայի գեղեցիկ օրերին, միայն այն դա- նադանութեամբ, որ գործողները արդէն հողեօրականներ չեն: Մինչև ե՞րբ, վեր- ջապէս, կարող են կրկնվել անպատիժ կեր- պով այս զարդիկ դէպքերը:

Ինչպէս յայտնի է, թիւրքաց կառավա- րութիւնը թոյլ չը տուեց անգլիական «Times» լրագրի թղթակցին գնալ Փարի- Սիս՝ ահաւանդելու հետազոտելու և ու- սումնասիրելու Սատուի կոտորածի հան- դամանքները: Այդ առիթով «Times» լրա- գրիչը իր յունվարի 12-ի համարում մի լրբը յորտաճով նախատում է թիւրք կա- ռավարութիւնը որ իրան թոյլ տուեց այդպիսի մի տարօրինակ և անմիտ բայ:

Մենք ցանկանում էինք, սառւմ է լրա- գրիչը, մի անաչառ, անկողմնապահ և ստոյգ հետազոտութիւն կատարել Սատուի դէպ- քերի վերաբերմամբ: Մեզ, հարկաւոր էին ձգրիտ անկողմնակներ, անհերքելի փաս- տեր այն բոլորի մասին, որ Փարի-Սիսյանում տեղի է ունեցել: Մեզ արդէն դնելի կա- կածանքի է ենթարկում թիւրքաց բոլոր հերքումները և բացատրութիւնները: Եւ շատ հասկանալի է, որ ամեն մարդ աւելի տրամաբար կը լինի հաւատ ընծայել հայի- թի ցուցմունքներին և զանդաններին, քան

թիւրքական աղբիւրներից բղխող պաշտօ- նական հերքումներին: Մենք կը շարունա- կենք և այժմ փաստերի, եղբուրթիւնների և գործերի դրութեան անկողմնապահ ժո- ղովող լինել, բայց չենք կարող չը ցաւել, որ թիւրքական ինքը դժուարացրել է հա- լատալ այն տեղեկութիւններին, որ պաշ- տօնապէս կը տայ ինքը: Հայոց պատրիար- քը, որ իրան ցոյց է տալիս մի անկախ բնաւորութեան տէր մարդ, ցանկացել է ինքնուրոյն կերպով հետազոտութիւն կա- տարել Սատուի, բայց չենք հաւատում, որ Բ. Կուսը թոյլտարի այդ բանը...»

1 օւնգոսի «Daily News» լրագրի թղթ- թակցը Արգոլա-Փաշայի յետ կանկեր քննիչ յանձնաժողովից բացատրում է նը- բանով, որ այդ փաշայի պայտօսակը, իր մէջ պարունակած զաղտնի հրահանգնե- րով և ծածկակարկերով, կորել է: Թիւրքական որոշել է անկախ քննութեան արդեւ լինել և ամեն բան կատարել իր կամքի համա- ձայն:

Կ. Պօլսից գրում են «Politische Cor- respondenz» լրագրին. «Թեև քննիչ յանձ- նաժողովը հասել է էրզրում, բայց հազի- թէ շուտով սկսի իր գործողութիւնները: Զեռալայ խտուածեան պատճառով շատ կարելի է, որ քննութիւնը յետաձգվի մինչև փոքրուս: Եւ որովհետև նշաններ կան, որ Մուշի նահանգում կարող է խօ- լերա սկսվել, որի պատճառով կառավարու- թիւնը զանազան արգելքների կենթարկի երթեկեկութիւնը ու հարդարակցութիւնը, ուստի բնական է, որ յանձնաժողովի ան- զամներն էլ չեն ցանկանայ վտանգի են- թարկել իրանց թանգազին կենտրոն: Իսկ այդ ժամանակամիջոցը կատարելապէս բա- ւական է, որպէս զի օսմանեան վարչական մարմինները կարողանան Սատուի աղէտի հետքերը անհետացնել...»

Կ. Պօլսից գրում են Մարսէյլի «Séma- phore» լրագրին. «Չը նայած իր ցան- կութեանը, Խալիլան չը կարողացաւ մաս- նակցութիւն ունենալ քննիչ յանձնաժողովի մէջ: Մտնակոն, որին Խալիլայի գեղական կատարանին ուղարկեց էրզրում, եկաւ էր- զրում. բայց քանի որ նա Բ. Կուսից թոյլ-

ուութիւն չունէր մասնակցելու յանձնա- խմբի մէջ, նրան ոչ մի ընդունելութիւն չարին: Մինչև հիմա էլ արդէն երեք շա- բաթ կամ աւելի է, ինչ կատարանի պա- հանջում է այդ թուղթը Բ. Կուսից, բայց դեռ չէ ստացել: այսպիսով նրա ներկայացուցի- չը, Մտնակոն, մինչև այժմ էլ սպասում է էրզրումում...»

Պետերբուրգի «Тражданинъ» լրագի- րը գրում է հետևեալը. «Ոչ որ չէր կա- կածում սուլթանին յատուկ բարի դիտա- երութիւնների մասին, բայց նրան շրջա- պատում է խորհրդակցանքի մի ամբողջ խումբ, որոնց շահ է ծածկել ձմարտու- թիւնը: Քննիչ յանձնաժողով նշանակելու գործում մեծ արգելքը գլխաւոր շտաբն էր: Նա խկապէս համոզեց սուլթանին դիմադ- րել օտար դիւղաանների մասնակցութեանը՝ հայկական անկարգութիւնների գործի քնն- նութեան ժամանակ: Մի և նոյն գլխաւոր շտաբը հրամայեց, որ ոչ մէկ օտար թղթ- թակցի թոյլ չը տրվի գնալ այն տեղը, ուր տեղի ունեցան անկարգութիւնները: Այդ- պիսի պայմաններում դժուար է սպասել, որ առաջիկայ քննութիւնը կարողանար ձմա- րիտ լըս սկսել թիւրքերի կատարած վեր- դրուցուցիչ կամայականութեան վրա փոքր- Ասիայի հայերի դէմ: Փորձեր եղան մաս- նաւոր անձանց կողմից քննելու և իմա- նալու այն պատճառները, որոնք առա- ջացրին հայոց անկարգութիւնները, օրինակ «Times» լրագրը անպատճառ կամեանում էր Բիթլիս ուղարկել իր յատուկ թղթակցին, այդ գործը հասաւ սուլթանին, որը բացի ի բաց մերժեց վերջիցնալ լրագրի խմբա- լութեան միջնորդութիւնը: Փորձեց միջա- մըտել այդ գործում Կ. Պօլսի հայոց նոր պատրիարքը, բայց նա ևս ոչինչ դրական հետևանքների չը հասաւ: Պարզ է, որ թիւր- քաց կառավարութիւնը վճռել է խորը զաղտնիքով վարաբարել այդ գործը: Վա- ներին և միասնականութիւն ստեղծում են լեւ- իսկ օտարներին, անկողմնապահ դիտողնե- ներին հեռացնում են առանց քաջվելու...»

Բուխարէստից «Times» լրագրին գը- րում են յունվարի 15-ից հետևեալը. «Մի հայ, որ ժամանակաւորապէս ապրում

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՄԻ ԳԻՏ ԳԿԱՏՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆ

(Պատմական ակնարկ)

I

Մրանից տասն ութ տարի առաջ, երբ դեռ Բուլ- գարիան հեծում էր թիւրքաց լծի տակ, այնտեղ էլ տեղի ունեցան սոսկալի դէպքեր, որոնց նմաննե- ըր միայն թիւրքիայում կարող են կատարվել:

Սակայն բոլորները աւելի բաղդաւոր էին: Այն ժամանակ, երբ նրանց հայրենիքը սպանդանոց էր դարձել, նրանց արեւնակից և դաւանակից ռուս ժողովուրդը մտնում էր առիւծի պէս և դայրոյ- թից պատրաստ էր յարձակվելու և պատառոտելու գիշախանձ բորենուն: Եւ տով նրանք զաւան և մի ուրիշ պաշտպան՝ դէմն Գաղաթոսին: Անգլիայի այն ժամանակվայ պահպանողական միտնարու- թիւնը հովանաւորում էր թիւրքերին, ազատամիտ կուսակցութեան պարագլուխը իր վրա վերցրեց զօճերի պաշտպանութիւնը և հրատարակեց մի գրքով՝ «Bulgarian horrors and the question of the east», (Բուլղարական սարսափները և արե- լեւան հարցը) վերնագրով, որ մի ֆիլիպպիկա էր պահպանողական միտնարութեան և թիւրքե- թի դէմ:

Մենք կամենում ենք քաղաւածօրէն ծանօթաց-

նել «Մշակին» ընթերցողներին այդ հետաքրքրի զրբոյի բովանդակութեան հետ: Սակայն նախ քան բուն գրքոյի բովանդակութեան անցնելը, հարկաւոր ենք համարում կանգ առնել այն եր- կու առաջարկների վրա, որոնք զետեղված են այդ գրքոյի ռուսերէն թարգմանութեան ըսկը- բում *):

Այդ առաջարկներից առաջինը պատկանում է ռուսերէն թարգմանութեան հրատարակիչներին, իսկ երկրորդը՝ անգլիացի միտէր Ալեքսանդրին, որ այն ժամանակ եկել էր Ռուսաստան իրազօ- րութիւն ունենալով Գաղաթոսից՝ առաջարկելու թարգմանել նրա գրքոյիչը այն պայմանով, որ վաճառման արդիւնքը գործ դրվի թիւրքաց բըռ- նութիւնների զօճերի օգտին:

Այս հրատարակիչներն առաջարկեցին համառօ- տապէս.

«Պարտաւ է տրուում մարդուս, երբ նա այժմեան քաղաքակիրթ դարում ախնաւտիս է լինում այնպիսի առևելի շարագործութեան, ինչպէս և քրիստոնեաների անխնայ կոտորածը Բուլղարիա- յում: Այդ սարսափը կարող էր յուսահատու- թեան հասցնել մարդուս, եթէ շուտով տեղի չը տար դայրոյթի սուրբ դպրոցներին, որ վառում է մարդուս սիրտը վրէժխնդրութեան բոցով և

*) Ռուսերէն թարգմանել են՝ Է. Ս. Սոբոլձո- ոսցեւ և Կ. Մ. Եստուշեւ-Րոմին: Հրատարա- կել է Սլավոնական մասնաժողովի Պետերբուրգի բաժնին:

պահանջում է, որ արմատից ջնջվի ամօթաբեր շարիքը:

«Սակայն այդ առաջին տղաւորութեան աղ- դած սարսափը նսեմանում է այն զգացմունքի առաջ, որ տրուում է մարդուս, երբ նա յանկարծ նկատում է, որ ինքը մենակ է մնում իր դայ- րոյթով, որ նրան շրջապատողները չեն ուզում տեսնել շարիքը, բացառում են այդ շարիքի գոյութիւնը, անտարբերութեամբ են վերաբը- լում նրան և խեղաթիւրելով ակներև ճշմարտու- թիւնը՝ սեղ սպլոտակ են անուանում, սպլոտակը՝ սեղ, և որ աւելին է, արդարացում են քստմենելի ոճիբը և անտաթ իմաստակութեամբ աշխատում են բռնութեան մեղքը գցել բռնութեան զօճի վրա: Ինչ զրբուցներէն էլ որ զղխն շարիքի այդ բացատրութիւնը և ճշմարտութեան խեղաթիւրու- մը, այդ անտանելի է մարդկային պարզ և շի- տակ զգացմունքի համար, երբ եղևնադործու- թիւնը ակներև է, երբ զօճը դեռ տապալված է դետին և շարագործը ածում է իր յաղթանակը:

«Այս անտառադաւալայ այսպիսի մի զգացմունք տրեց մեզ, ռուսներին, երբ մենք անանք, թէ ինչ ներգործութիւն ունեցան արևմտեան Եւրո- պայի վրա այն սոսկալի տեղեկութիւնները, որ նա անընդատ ստանում էր թիւրքերի կատարած զաղտնութիւնների մասին բուլղարական խաղաղ ազգաբնակչութեան վրա: Այն ժամանակ, երբ մեր սրտերը վառվում էին կատաղի դայրոյթից, այն ժամանակ, երբ մենք հրաւիրում էինք ամբողջ

մարդկութիւնը վկայ և վրէժխնդիր լինել, մեզ պատասխանում էին անտարբերութեամբ ու ար- համարանքով, փարիսեցիական յորդորներով դէ- պի ստանաւորութիւն և համբերութիւն, վերջա- պէս առեղուկեան շարսիւնը ծիծաղով անկող- թեան, որ զգում էին դէպի մեզ և մեր պատճա- ռով դէպի թշուառ զօճերը: Կարծես ամբողջ աշխարհում կարել անհետացել էր, ծածկվել էր ու թաղվել քաղաքական փոքրոյի, նեղ և նեկ- դաւոր հաշիւների տակ արդարութեան, սիրոյ և կարեկցութեան սուրբ զգացմունքը: Անխտառու- թիւնը դէպի մեր քաղաքականութիւնը, կասկած- ները մեր աշխարհայտաւան ճղտումների վերա- բերմամբ արգելում էին Եւրոպային ուշադրու- թեամբ և մարդկային զգացմունքով վերաբերվել այն հաղաբարտ արեւնաշաղախ զօճերին, որոնք կուտակված ընկած էին նրա աչքի առաջ: Անդ- լիան, որ վերցրել էր իր վրա բարոյապէս ան- հարին մի պարտականութիւն, պարտականու- թիւն հաւասարապէս հովանաւորելու և՛ ճնշողնե- րին և՛ ճնշվածներին, և որը այդ պարտականու- թիւնը դարձրել էր իրաւունք՝ պաշտպանելու ճնշողներին իշխանութիւնը զօճերի վրա: Անգլիան կարծես մոռացել էր ամեն ինչ և ընդունակ էր զգալ միայն մի բան—անխտառութիւն դէպի մեր սպտութիւնը: Կարծես վնճ զգացմունքները հան- գել էին այն կրճերում, որ նրանք քանիցս յու- գել էին այնքան սատկութեամբ:

«Բայց, փառք Աստուծոյ, նրանք հանգել էին

է այդ քաղաքում և բաւական համեստ դրութիւն ունի, ստացաւ իր կնոջը, որը գանկում է Մուշում, մի նամակ, որը մասամբ լոյս է գցում գործերի դրութեան վրա այդ շրջանում: Նամակը գրված է հոկտեմբերի վերջին և նրա մէջ նկարագրված է սարսափահար եղած ազգաբնակիչների յուսահատ դրութիւնը: Ոչ ոք չէ վստահանում վերադառնալ իր գրադմունքներին. կանայք թաղնում են աների մէջ, որովհետև փողոցներում նրանք ենթարկվում են ամեն տեսակ վիրաւորանքներին և բռնադատութիւններին կատարողներին և զինւորների կողմից: Կրա հեռուանքն այն է, որ առևտուրը և ամեն գործեր կատարելու կանգ են առել և միջերկրի դներն ևս շատ բարձրացել են: Նամակի հեղինակը երևում է, որ վախենում է բոլոր մանրամասնութիւնները հաղորդել կատարողներին, ոչ առանց հիմքի, որ նրա նամակը կարող է ընկնել թիւրքաց իշխանութիւնների ձեռքը: Իսկ այդ տեղեկութիւնների ձեռքումը և դրանց հաղորդող անձնաւորութեան բարեխղճութիւնը զուրա են բոլոր կանխածներից:

ԱՎԱՆԱՏՍԻ ԿԱՐԻՔԻՐ

Անգլիական «Times» լրագրի զեկտեմբերի 22-ի համարում տպված է Կ. Լոյդի հետեւեալ նամակը, որ առաջ ենք բերում մի քանի կրճատումներով:

«Ես ճանապարհորդել եմ թիւրքիայում և Փոքր-Ասիայում և եղել եմ 1890 թվին էրդրում իմ հարցոյ՝ հանրագեալ Արիֆօրդ Լոյդի հետ, որ հիւպատոս էր այն ժամանակ, երբ քրիստոնեաների ճնշումները Փոքր-Ասիայում գրաւել էին անգլիական կառավարութեան լուրջ ուշադրութիւնը: «Քրիստոնեաների դէմ եղող ամեն տեսակ հաւածանքների պատմութիւններ հասնում էին մեր ականջին, և պէտք է ասել, որ իմ եղբայրը միշտ արժանաւոր էր կարծելու, որ այդ տեսակ պատմութիւնները խիստ չափազանցած կարող են լինել. այդ պատճառով էլ նա իր պարտքն էր համարում ջննել և ստուգել այդպիսի դէպքերը, նախ քան յայտնէր Կ. Պոլսի անգլիական դեսպանին:

«Ես ունեմ իմ ձեռքում նամակներ, որ ինձ գրել է եղբայրս 1890 թվին ընթացքում, և նրանցից են եղբայրացնում եմ, որ ոչ մի կասկած չը կայ թէ քրիստոնեայ ազգաբնակիչները թիւրքիայում սատակ հաւածված է: Ես կարող եմ, եթէ հարկաւոր է, յիշել անթիւ հաստատ ասպացուցված դէպքեր, որոնք վերաբերում են քրիստոնեաներին սպանելուն, թաղանջելուն և կողոպտելուն: Քրիստոնեաների դիմադրող ճնշումներն են թիւրք իշխանութիւնը և քրիւղիքը: Իշխանութեան բռնած զիջքը քրիստոնեաների վերաբերմամբ այնպէս է, որ ապահովում է մահմետական աղա-

բնակիչներն անպատիվ լինելը: Խոչըս վերաբերում է քրիստոնեաների անդադար խուզարկելուն, նրանց բանտարկութեան երկար ժամանակով անհաւատարմութեան ծիծաղելի պատուակներով, նրանց նամակները բաց անելուն, որ ստացվում են պատով, բացարձակ հաւածանք հայոց լեզուի դէմ, նրանց գրքերի արգելումն, կատարեալ ազատութիւն, որ վայելում են քրիստոնեաներին վիրաւորող մահմետականները, խիստ հաւածանքներ, որ կապված են հարկահանութեան հետ: Այս փաստերը բաւական են, որ անկիրթ մահմետականներին թող տան կարծելու, թէ իրանք արտօնութիւն ունեն կառավարութիւնից քրիստոնեաներին սպանելու և կողոպտելու...»

«Իսկ ինչ վերաբերում է քրիւղիքին, նրանք նայում են քրիստոնեաների վրա, իբրև իրանց բնական որսի վրա: Իր նամակներում իմ եղբայրը շատ անգամ յայտնում է ցանկութիւն, որ մի քանի տեղերում լինեն առանձին գործեր՝ քրիստոնեաներին քրեական հաւածանքներից պաշտպանելու համար:

«Այդ պատճառով մենք պէտք է սպասենք, որ արդար ջննութիւնը, որին համաձայնել է սուլթանը, կը հաստատի այն սարսափելի հաւածանքները և ճնշումները, որոնց ենթակայ են քրիստոնեաները թիւրքաց Հայաստանում:»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՂԿԱՍՏԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՐՅՐ

«Съверъ Кавказъ» լրագրը նորից յարուցանելով կովկասեան համալսարանի խնդրը, ասում է. «Ամբողջ Ռուսաստանի համար, իր 125 միլիոն ազգաբնակիչներով, գոյութիւն ունեն 10 համալսարաններ, որոնք ունեն մտաւորական 15,000 ուսանողներ:—որ մի կաթիլ է ծովի մէջ համեմատելով մեզ շրջապատող վայրենութեան և սղիտութեան թանձր խաւարի և այն բազմաթիւ ինտելիգենտ աշխատողներին հետ, որ մեզ համար անհրաժեշտ են ուսուցիչ կենսիքի այդ սարսափելի վերքի դէմ կռուելու համար:

«Ինչ որ վերաբերում է կովկասին, «ուսուցիչ թաղի այդ աղանջողին», նրա 8 միլիոն ազգաբնակիչներն մտաւոր և բարոյական զարգացման չափազանց ստոր մակերևոյթը ոչ քիչ համար դադարիք չէ, և կառավարութեան պարտաւորութիւնները դեռ լրիւ կատարված չը պէտք է համարել դէպի այդ ազգաբնակիչները, ստորին և միջնակարգ կրթութիւնը միայն ընդարձակելով և բարձրելով: Անհրաժեշտ է բարձրացնել ոչ միայն ժողովրդի, այլ և ինտելիգենտ հասարակութեան զարգացման մակերևոյթը, որը նոյնպէս շատ յետ է մնացել կովկասում բուն ուսուցիչ նախնիների հասարակութիւնից:

«Մեծ նշանակութիւն ունի և շատ օգտակար է, որ տեղական գործիչները պատրաստվեն հէնց ի-

րանց տեղում, ուր դաստաւութիւնը սերտ կերպով կապված կը լինի երկրի պէտքերի հետ և որի նպատակը կը լինի զարգացնելու ապագայում կովկասի տնտեսական և կուլտուրական կենսը: Ռուսաստանի պակասութիւն ևս չի լինի: Այժմ արդէն, ասում է լրագրը, կովկասի 9 գիմնադարձանքում իւրաքանչիւր տարի աւարտում են մօտ 200 հոգի. իսկ մեր գիմնադարձանքը լցված են, և անհրաժեշտ է էլի 3—4 գիմնադարձանք բանալ:

«Բացի դրանից, թիֆլիսի համալսարանը ամենամօռը կը լինի և թուրքեստանեան երկրի 2 գիմնադարձանքի համար: Այդ բոլորը աչքի առնելու օճակով, կարելի է հաշուել, որ ուսանողների թիւը կը լինի 800-ից մինչև 1000, այսինքն նոյնը ան, որքան խարկով համալսարանում և աւելի: Կազանի և Սեյսայի համալսարանների ուսանողները ևս կը գանձվեն կովկասի համալսարանի համար:

ՄԱՏՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Անցեալ տարի Լոզանում լոյս տեսաւ «Etude ethnographique et juridique sur la famille et le mariage armenienne» վերնագրով մի հետաքրքրական գրութիւն, հեղինակութիւն Յ. Մեղաւորեանի, որի մէջ հեղինակը նպատակ է դրել՝ հայոց նախնական և այժմեան ընտանիքի և ամուսնական օրէնքների ուսումնասիրութիւնը դնել գիտական հողի վրա: Բուն նիւթին գալուց առաջ հեղինակը դրել է մի ընդարձակ յառաջբան՝ հայոց իրաւաբանական մտանազանութեան մասին հին և նոր ժամանակ, որ աչքի ընկնելու չափ աղքատ է:

Ազգագրութեան գիտում հեղինակը համառօտ յիշում է ներկայումս ընդունված դրութիւնը նախնական ընտանիքի կազմակերպութեան և զարգացման մասին: Ապացուցանելով յետոյ, որ հայոց մէջ ևս գոյութիւն է ունեցել տոհմը (gens)՝ նկարագրում է տոհմագետի (հնահայեացի) իրաւաբաններն ու նշանակութիւնը, տոհմի անդամների փոխադարձ յարաբերութիւնները և նրա մէջ արդի կարգերը: Այնուհետև նկարագրում է հայրենական (patriarcale) ընտանիքը հայոց մէջ, հոր, մոր և միւս անդամների իրաւունքները և արդի կարգերը: Յետոյ առանձին հատուածի մէջ գեղեցիկ նկարագրելով հայոց ամուսնական սովորութիւններն ու ծէսերը, ապացուցանելով, որ հայերն էլ սովորութիւն են ունեցել կիրք աւանդելուն և գնդուղի փակում է ազգաբարկան մասը: Այս մասը կազմելիս հեղինակն օգտվել է հին մատենագրութեան և նորագոյն գրութեան, զլիսաւորապէս Ե. Լայպանցի «Չաւախքի բուրձնաբերից»:

Ամուսնութեան զլուրը, որի համար հեղինակին իբրև աղբիւր է ծառայել զլիսաւորապէս Մը. խիթար Գօշը, ջննում է հայոց և կեղեցում ընդուն-

յանում է նետնակաւ.—թիւրքը պէտք է տուժի այդ բոլորը. նրա անթիւծող ոտքը այլ ևս երբէք պէտք է չը լինի այն տեղում, որ պղծվել է նրա անօրինակ ոճիւրներով.—բաւական է ինչքան հաճախեցինք, առանց այն էլ նա արիւնանակի հետք է թողել պատմութեան մէջ, առանց այն էլ նա իր տիրապետութեան ամբողջ ընթացքում վիրաւորանք է եղել մարդկութեան համար. պէտք է վերջապէս չղթայ դնել Եւրօպայի այդ կատաղի զազանի վրա, իսկ եթէ նրան արժողիլ դէն գցել իր վրայից այդ չղթան, պէտք է առանց այլ և այլոց խաղաղ խնդրել նրան,—վաղուց նա արժանի է խեղճամահ լինելու:

«Անգլիական ժողովուրդը համակված է ամօթի և զարդոյթի զբացմունքով մտածելով, որ իր կառավարութիւնը կարող էր համարվել թիւրքիաւոր բարեկամ և դաշնակից, և ժողովրդի կամքը վճռում է, որ Բրիտանիան չի դօժի ոչ մի մարդ, ոչ մի թիւրքիական և ոչ մի ֆուտուս տեղիւնք այնպիսի մի ժողովրդի պաշտպանութեան համար, որի համար բարբարոս խօսքը գովական անուն կը լինէր, այնպիսի անառակ և անսիրտ բռնաւարութեան համար, որ մինչև իսկ ամօթ է կառավարութիւն անուանել:

«Անտարբեր մնալ այդպիսի զփոխային տեսարանների առաջ—այդ արդէն երկիւրտութիւն է, խայտառակութիւն է, անարգանք է մարդկութեան համար: Որքան ցուալի և ծանր է մեղ տեսնել և զգալ, որ մենք ուրիշ պետութիւնների հետ պար-

ված ամուսնական սկզբունքները, այն պայմանները և յատկութիւնները, որոնք պէտք է ի նըկատ առնվեն ամուսնութիւն կնքելիս, ինչպէս ամուսնացողների տարիքը, փոխադարձ համաձայնութիւնը, ծնողների համաձայնութիւնը, արեւակցութիւնը, խնամութիւնը, որդեգրութիւնը, կաթնեղայրութիւնը, խորթութիւնը, կրօնների տարբերութիւնը, կուսակրօնութիւնը և այլն: Նըկարագրելով յետոյ, թէ ինչպէս է կատարվում հայոց մէջ նշանագրութիւնն ու պատկի օրհնութիւնը՝ անցնում է պատկի բազմաման խնդրին: Ապացուցանում է, որ հայոց մէջ չէ եղել բաժանումն (séparation de corps), բայց պըտակի լուծումն ընդունված է եղել, և մէջ է բնութագրում մի շարք պատճառներ ամուսնալուծութեան. —պոստիւթիւն, գերիվարութիւն, երկար բացակայութիւն, բնութեան դէմ վարմունք, դաւադրութիւն ամուսնու կենսիքի դէմ, վատ յարաբերութիւն, դիւահարութիւն, վարակիչ հիւանդութիւն, ամուլութիւն, ամուսնական տկարութիւն, կուսութեան խախտում, անասնայի զղաւանդ, կրօնափոխութիւն, կախարչութիւն: Իր գրութեանը հեղինակը վերջացնում է բացատրելով ամուսնալուծութեան նետնաքները լուծվածներին, նրանց ստացուածքի և զուգահեռի վերաբերմամբ:

Գրքի թիւրքի կողմերի մասին կարելի էր բաւական նկատողութիւններ անել. օրինակ աղբիւրների անկատարութիւնը, մասնաւոր ազգագրական մասի մէջ, մի քանի ենթադրութիւնների տարակուսական, ոչ-համոզողական լինելը, տեղ-տեղ աչքի ընկնող անճշտութիւններ և այլն: Բայց այն և այսպիսի պակասութիւնների հետ ունի և այն գերազանց առաւելութիւնը, որ հիմնված է ճիշդ գիտական ոճի վրա և մի ամբողջական պատկեր է ներկայացնում հայոց ընտանիքի կազմակերպութեան և ամուսնական օրէնքներին: Այս գրութեանը մասնագէտ ուսումնասիրողի ձեռքում կարեորտեղեցոյց կը լինի նորատու հետազոտութիւնների ժամանակ, որոնք հարկաւ շատ բան կը լրացնեն այս գրքում և կը փոփոխեն. բայց առանց այսպիսի գրքի, որ իր տեսակում առաջինն է մեր մէջ՝ ուսումնասիրողը, հարկաւոր երկոյթիւններ առաջ պէտք է չուարած և անօգնական մնար:

Արժէ, որ պ. Մեղաւորեանի գիրքը հայերէն թարգմանվի:

Ստ. Մ.

ՀԱՅՈՑ ԹԱՍՏՐՈՆ

Երկուշաբթի, յունվարի 23-ին, բանկային թատրոնի դահլիճում սիրողներ խումբը ներկայացրեց Երկրի Աւազակները: Գերասանները մասնակցում էին Պետրոսեան և Յարութիւնեան:

Ինչպէս երևում էր՝ ներկայացումը շատ շատայ էր պատրաստված. մի քանիսը դեռ լուս չէին սովորել իրանց դերերը, և այդ պատճառով խաղի

տաղանց ենք գտնվել շնորհիւ դէպի ձեզ, ուսուներդ, ունեցած անստահութեան: Մենք հաւատացնեք այն ազդի խոստումներին, որ երբէք չէ կատարել իր խոստումները, հաւատացնեք թէ բարեփոխութիւններ կը մտցնի իր պետութեան մէջ այն ցեղը, որ երբէք չէ փոխվել և չի փոխվել դէպի լաւը. հաւատացնեք նրա կեղծաւորութեամբ յայտնի կառավարիչներին. յուսացնեք, որ մի քանի թիւրք զարմեղով կը բանանք նրանց պատմութեան մէջ մի նոր, մաքուր էջ, որի վրա կը դրնք օրէնք, բարութիւն և արդարութիւն. և այդ բոլորը խաղութիւնն ու պատրանք դուրս եկաւ, և մենք միանաւոր համազօրեցինք, որ ամենաչնչին շունչից նորից բացվում են հին թիւրքերը, բոլորը ներկված արիւնով, բոլորը լի այնպիսի սուսկայի եղեւնազորութիւններով, որ կարծես նոյն իսկ երկրի հրեշտակները պէտք է թիւրքով ծածկեն երեսները՝ կարգաւոր այդ ողբի և վշտի ծրարները:

«Յուսանք ուրեմն միայն խորին հաւատով,—նչ, եթէ կատարվէր այդ յոյսը.—որ կը հասնենք ցանկալի նպատակին, առանց նորից առիթ տալու, որ թափվի անմեղների արիւնք: Նա, Որի աջումն է մեր բախար, «Ռազմերի Աստուածը», որ է և «Խաղաղութեան Աստուածը», թող նա հովանի լինի և խաղաղութեամբ վախճանին հասցնի մեր բաղձանքը»:

Տ. Յովհաննիսեան

ոչ ընդ միշտ, նրանք բացառաւորապէս վերջապէս և թշուառ ստիճանների համար, և արդէն տարածվում են լայն և բուռն հոսանքով ամբողջ Բրիտանիայում: Այնտեղ, այդ հեռուոր կղզում, մարդիկ այժմ չարիքը ուղղակի չարիք են անուանում, արքայութիւնը—արքայութիւն, այնտեղ կանայք և մարդերը աղի արցունք են թափում, կարեկցելով բոլորապէս Հառքէի մեծ վշտին և ազատ երկրի ազատ քաղաքային անեղիւղ աստուծ են, թէ իրանք ամառում են այն օգնութեան և հովանաւորութեան համար, որ Բրիտանիան ցոյց տուցեալ կատարի գաղաններին՝ անօգնական զօհերի դէմ:

Միտքեր Ալեքսանդրի գրչին պատկանող առաջաբանը գրված է՝ հրատարակիչներին և առհասարակ ուսանողներին ուղղած նամակի ձևով:

Ահա նրա բովանդակութիւնը:

«Իբրև առաջադիմական կուսակցութեան պատկանող, բայց ոչ մի պաշտօն չունեցող սոսկ անլուրացի, ևս պատիւ եմ համարում ինձ արված իրաւունքը՝ առաջարկելու ուսուցիչ մեծ և մեծահագի ժողովրդի ուշադրութեանը այս էջերը, որոնց մէջ Անգլիայի վեհապետն պետական գործիչը այնքան պերճախօսութեամբ հնչեցնում է իր հայրենիքի ձայնը:

«Մեր անգլիացիներին, սրտերը ոչ պակաս քան ձերը արվում էին, երբ լսում էինք տեղեկութիւններ բոլորապէս դէպքերի զիւական վայրագութիւնների և անասնի սարսափների մա-

սին՝ ձերի է, ձեր կարեկցութիւնը և զարդոյթը աւելի ևս սաստկանում էր շնորհիւ ձեր և զոհերի ցեղակցութեան և դաւանակցութեան: Ազգային կապ չը կայ մեր և նրանց մէջ. Բայց մեր կըրծումն էլ նոյն մարդկային զբացմունքն է ապրում և մենք էլ փրկութիւն ենք սպասում նոյն Միտքին Փրկչից: Այդ է պատճառը, որ մեր ամբողջ կղզում, նրա մի ծայրից մինչև մինչև միւսը, բոլոր սրտերը համակված են նոյն վշտի և ցասման զգացմունքներով և մենք դատապարտում ենք մեր միջինարարութեան այժմեան գործունէութիւնը, համոզվելով, որ նա չէ արտապայտում մեր ժողովրդի խօհերը և զբացմունքը:

«Մեր կանայք որ ու զիջը զարգանում են և հեծում, երեսակցելով բոլորապէս սարսափները. մենք ստիպված ենք թաղանջել լրագրական թերթերը մեր մանուկներից, որպէս զի նրանց անմեղ հոգին չը պղծվի նոյն իսկ ամենահամեստ նկարագրութիւններով այն բարբարոսութիւնների, որոնց զօճ են դարձել թշուառ բոլորք մանուկները՝ նոյնքան մաքուր և նոյնքան անմեղ, որքան և մերոնք: Այդ մարդիկ, որոնք այնքան փափկասէր չեն և դժուար են յուղվում, նրանք էլ չեն կարողանում դիմանալ նրանց աչքերն էլ լցվում են արցունքով և ձայները դողում, երբ կարգում են կամ լսում այդ դէպքերի մասին.—դատեցեք արժանով, թէ ինչ խորին և աննեղ զգացմունք է տարել մեզ ամենքիս: «Իմ հայրենիքիս միահամուռ համոզմունքը կա-

կանոնադր ընթացքը երբեմն ընդհատուած էր և փշաջնուած ընդհանուր տպագրութիւնը:

Գերասան Պետրոսեան կատարեալ աջողութեամբ կատարեց Կարլի դերը, և վարձատրուեց բուռն ծափահարութիւններով: Յաւալի է սակայն, որ Պետրոսեան ունենալով բաւական ընդարձակ ձայն, չէ կարողանում տիրապետել իր ձայնին, և շատ տեղ հասցնում է խանձված, խաբոտ բղաւջութիւնով: Ընդհանուր բաւական է փոքր ինչ աշխատանք, որ եղած ձայնով կարելի լինի ցոյց տալ բարկութեան և սքեռութեան բարձր արտայայտութիւնները:

Սրբոյնքի թուում հասարակութիւնը առանձին հետաքրքրութեամբ հետեւում էր Լ. Մանուէլեանցի խաղին, որը առաջին անգամ է դուրս դալիս բուռն թիֆլիսում, բայց որը մի քանի անգամ բեմ է դուրս եկել դաւառում՝ վաղարշապատում, որտեղ ձեւարանի ուսուցչի պաշտօն էր վարում:

Երիտասարդ սիրող Ֆրանցի դերը ուսումնասիրել է բարեխղճութեամբ, լաւ պարզել է նրա տիպը, նրա հոգեբանութիւնը, պահում է իրան բեմի վրա նոյնքան ազատ, նոյնքան համարձակ, ինչպէս մի դերասան, պիտէ փոխել իր ձայնը դերի բովանդակութեան համաձայն, սակայն, չը նախընտրուի այդ արժանաւորութիւններին, նրա խաղը տպագրութիւն չէր գործում: Մեր կարծիքով այդ երկուսի զլխաւոր պատճառն այն է, որ Մանուէլեան թէև երեկային ժամով լաւ ըմբռնել է իր ներկայացնելիք անձնաւորութիւնը, բայց բեմի վրա չէ վարձվել, իբրև դերասան: Ինքն պահանջում է նոյնպէս յայտնի տեխնիկա, որ ձեռք է բերում միայն փորձով, այդ տեխնիկայի ուսումնասիրութեամբ: Պ. Մանուէլեան աւելի ղեկավարուող էր, քան դերասան:

Միւս սրբոյնքից աչքի էր ընկնում Լ. Տիգրանեան: Թատրոն իր էր հանրակամներով:

ՆԱՄԱԿ ԵՐԵՎԱՆԻՑ

Յունվարի 19-ին

Վերջապէս Սեդրակ Մանուէլեան հեռացաւ թեմական դպրոցից: Գալուցում տեսիլ ժամանակաւոր պաշտօնակատար ընտրուեց ուսուցիչ Կ. Տէր-Սկրտչեան, որը ներկայ լսմբի մէջ բոլորից արժանաւորն է այդ պաշտօնի համար: Հիմարանը աւարտելով՝ բարձրագոյն ուսում ստացել է Ֆրանսիայում և իր ուղղութեամբ նոր հայեացքներով տէր մարդ է:

Քանի մի օր առաջ, Գայեանեան դպրոցի բեմի վրա տեղի ունեցաւ աշակերտական ներկայացում, սակայն ոչ թէ թեմական դպրոցի ուսուցչական լսմբի շնորհիւ, այլ շնորհիւ ձեւարանից դուրս եկած և թեմական դպրոցում նոր ընդունված աշակերտներին:

Քաղաքագլուխ բժ. Տիգրանեանի ձեռք առած միջոցները հայալեզուներին դէմ դուրսին են: Այդ հայալեզուները, նախկին քաղաքագլխի ժամանակ, սովորել էին լսուցները մէկ անել, ժողովրդին քաղցած թողնել և այդպիսով ստիպել, որ հացի գինը բարձրացնեն: Այս անգամ էլ փորձեցին, բայց փորձը վտար անցաւ և դուռնայի որոշած տակաւն ընդունվեց հրապարակում: Յորենի խաղվարը վաճառուում է 25—28 բուրբուլ, իսկ հացի լիտրը մինչև այժմ վաճառուում էր 28 կոպէկով, դուռնայի հացի գինը ինչպէս 26 կոպէկով, անա այդ գնով հացովաճառները չուղեցին վաճառել, մինչև ձեռք առան խիտ միջոցներ:

Բամբակի գինը մէջբանում սկսում է բարձրանալ: Այն բամբակը, որը սկզբում 5 ր. 50 կոպէկից աւել չէր վաճառուում, երկի վաճառուից 6 ր. 40 կոպէկով: Եւ այն ֆիրմաները, որոնք յամառութեամբ շարունակում էին պատերազմ բամբակի գինի վերաբերմամբ, վերջերս սկսել են միմանց ձեռքից խլել բամբակի հակերը: Ամին մէկը պէտք է գին իր պաշարը, սակայն այս տարի բամբակը այնքան քիչ է, որ դժուար թէ նրանց պահանջը լրացնի: այժմանից արդէն բամբակը քիչ է գալիս, և անա թէ ինչի համար գինը թանկացաւ:

ՆԱՄԱԿ ԳՕԻՄՍԻՑ

Յունվարի 3-ին

Նախորդ նամակով հաղորդեցինք, որ տեղական թատերաւոր ինտելիգենտ խումբը, գաւառապետի օգնականի միջոցով, խնդրեցին զիմու է նահանգապետին՝ թոյլտուութիւն խնդրելով այստեղ ներկայացումներ տալու: Խումբը չը հաջողուեց իր նահանգապետին, որ զարհուրեց իր նահանգապետին, որ զարհուրեց իր նահանգապետին, որ զարհուրեց իր նահանգապետին:

զապետին՝ թոյլտուութիւն խնդրելով այստեղ ներկայացումներ տալու: Խումբը չը հաջողուեց իր նահանգապետին, որ զարհուրեց իր նահանգապետին, որ զարհուրեց իր նահանգապետին:

Ստանալով թոյլտուութիւն, գործի նախաձեռնողները, աչքի առաջ ունենալով դասադաս անձինքը, որոնց միջոցով կարելի է կազմակերպել սրբոյնքի մշտական խումբ, վճարեցին ընդհանուր ժողով հրահրելու ձեռնամուխ լինել գործին: Գեկտեմբերի 25-ին կայացաւ թատերասերների առաջին ժողովը. մասնակցողները թուում էր և մեր ուսումնարանի վարժուհին: Մի քանի հարցերի մասին խոսելուց յետոյ, ձեռնարկվեց նախազանի ընտրութեան: Կարճ վիճարանութիւնից յետոյ, խումբը միաձայն թատերասերների ընկերութեան նախազան ընտրեց բժիշկ Զ. Տէր-Յովսէփեանցին, փոխ-նախազան՝ Ա. Մէլիք-Շահնազարեանցին և ղեկավարական մասնախմբի նախազան՝ իշխան Թուրանեանցին, ապա օրնակները և քարտուղար:

Աւելորդ չենք համարում այդ առիթով մի քանի խօսք տեսել: Գործում սրանով երբորդ անգամ է, որ ներկայացում է տրվում, առաջին անգամ ներկայացում եղաւ 1888 թ-ին, մի քանի օտար երիտասարդների աշակերտութեամբ: Այն ժամանակ խաղացողներ չը կային, կանանց մասնակցութեան մասին խօսք անգամ չէր կարող լինել: Այժմ, ի նկատի ունենալով ստացված թոյլտուութիւնը, այլ և այն, որ կայ մի որոշ խումբ մարդկանց, որոնք մասնակցում են գործին, կարծում ենք, որ մեր այս նոր կազմակերպած թատերական ընկերութիւնը երկար կենանք կունենայ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ երեկոյան Լ. օն քօն օն Թ. սաց գործակալութեան միջոցով ստացանք հետեւեալ հեռագիրը: «Անգլո-հայկական ընկերութեան նիստում նախազան Ստեփաննոս ցաւակցութիւն յայտնեց, որ Անգլիան նպատակեց իր ժամանակին ոչնչացնելու Սան-Ստեփանոսի դաշնագիրը, որով հայերին ապահով գոյութեան էական երաշխարարութիւններ էին տրվում: Պարլամենտի անդամ Գուտ առաջարկեց միջնորդել, որ անգլո-ուսական զինուորական պահակախումբ (ԿՈՒՅՈՅԻ) կազմակերպվի, քննիչ յանձնաժողովի օտար ղեկավարներին և ստորագրել տալիս: Սա էլ ընտրութեան մի նոր ձև է: Զարմանալի է, որ թղթակցեց չէ հաղորդում, թէ ով է ընտրվածը...»

Մեզ գրում են թիւրքիայի Սամսոն քաղաքից, որ այստեղ նոր ձեռքարկութիւններ եղան:

Մեզ հաղորդում են, որ Ամենայն հայոց Կաթողիկոսը մտադիր է այցելել Բաթում, Բաղու և Կոնստանդնուպոլիս քաղաքները: Որքան ձիշտ է այդ լուրը, երաշխարարել չենք կարող:

Լուրեր են պտտում, որ անգլիական «Daily News» լրագրի յայտնի թղթակցից Ֆիլիք-Ջերարդ օչ թէ սպանված է, ինչպէս ասում էին մի քանի ժամանակ առաջ, այլ գաղտնի կերպով ձեռքարկված է թիւրքաց կառավարութեան ձեռքով: Հետաքրքրական է պարզել այս մօտ լինողը:

Ներկայումս թիֆլիսում են կովկասի նահանգապետները, որոնք եկել են մասնակցելու կառավարչապետի խորհրդի նիստերին և որոշելու մասնակցութեանը վերջով զինուորական տուրքը, որ նրանք տալիս են զինուորագրութեան փոխարէն:

Այսօր բանկային թատրոնում հայոց դերասանական խումբը երկրորդ անգամ պէտք է ներկայացնի Պարոնեանի «Բարաբար Աղբար» կօմիդիան, որը առաջին անգամ բաւական աջողութիւն ունեցաւ մեր բեմի վրա:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Գարնանը կը սկսվեն հետազոտութիւններ՝ Բա-

գուից մինչև Թէհրան երկաթուղու գիծ անցկացնելու համար:

Մեզ ուղարկված է մի նոր գիրք «Կարգ Աստուածապաշտութեան Հայաստանաց ս. եկեղեցոյ» վերնագրով: Գրքի կաղնիքն է Գրեա քա. Ս. Աղանեան: Թեմական դպրոցների և ծխական դպրոցների համար դասագիրք կազմելը լաւ բան է անկապած, բայց քաղաքացիութեան ոյժ տալ տիրացու արաններին և դրանց համար էլ դասագիրք կազմել, ինչպէս արել է Աղանեան քա. Ս. Աղանեան, այդ արդէն մի այնպիսի վարմունք է, որ պատիւ չէ կարող բերել նոյն իսկ ոչ մի տեքստերի:

Վերին-Ա. Գ. Ու. Ս. Ս. մեզ գրում են. «Ամսիս 13-ին և 14-ին օրիորդաց դպրոցի դասընձում տրվեցին մանկական երեկոյթներ աշակերտներին և աշակերտուհիներին համար: Առաջին երեկոյթը աշակերտներին էր յատկացրված, իսկ երկրորդը՝ աշակերտուհիներին: Այդպէս էին վարվել լոկ տեղի փոքրութիւնը աչքի առաջ ունենալով: Երեկոյթին ներկայ էին, բացի ուսուցչական խումբից, նաև հողաբարձութիւնը և դպրոցի անցեալ տարվայ աշակերտուհիները: Կոնցերտը, տեղի փոքրութեան պատճառով, ներկայ չէին: Երեկոյթները բաղկացած էին երեք բաժանմունքից. 1) ոտանաւորները և զօհ կրէն լեզուով դուարձայի պատմաւածքները, 2) մանկական ներկայացումը և 3) մողական պատկերները: Մէջ ընդ մէջ երգվում էին զանազան երգեր: Կարգը շատ հետաքրքրական էր կազմված, և բաւական աջող կատարվեց: Երեկոյթների վերջում աշակերտներին և աշակերտուհիներին ուսուցչական խումբը և հողաբարձութիւնը լրանց կողմից հիւրասիրեցին թէյով և մրգեղէններով: Երեկոյթները ցրվեցին ուրախ տպագրութեան տակ:»

Ե. Ա. Ս. Ս. մեզ գրում են. «Հայոց երկուսու դպրոցների հողաբարձուների և երէցփոխի նախաձեռնութեամբ, յունվարի 1-ին, տեղի ունեցաւ մանկական երեկոյթ: Երեկոյթից ստացված եկամուտը յատկացրած էր ուսումնարանի գրադարանի օգտին. բոլոր ծախսերը հանած՝ զուտ արդիւնք մնաց 175 բուրբուլ:»

Թ. Ս. Ս. մեզ գրում են. «Ամսիս 18-ին կայացաւ մայր եկեղեցու երէցփոխի ընտրութիւնը: Մօտ հինգ հարիւր ծխականներից միայն երեսուհի հօգի ներկայ էին ընտրութեանը, որոնք և, հակառակ կանոնադրութեան, ընտրութիւն կատարեցին, իսկ արձանագրութեան տակ ստորագրողները օրինաւոր թիւը լրացնելու համար փողոցի փողոց մաս են անում արձանագրութիւնը և ստորագրել տալիս: Սա էլ ընտրութեան մի նոր ձև է: Զարմանալի է, որ թղթակցեց չէ հաղորդում, թէ ով է ընտրվածը...»

Շ. Ս. Ս. մեզ գրում են. «Երէկ, յունվարի 14-ին, երեկոյան ժամը 5-ին անգլիս հրդեհ սկսվեց Մոլուէս Աղաբաբեանցի տանը և տեղի մինչև առաւօտ: Քարաչէն երեքսրկանի տունը այրվեց բոլորովին: Կրակը լսիցից ինչ որ մտաշելի էր, ինչ որ տնից անկարող եղան աղաւթը: Այդ տանը ընկնում էին աւելի քան տասը տնիկներ, չքաւոր դասակարգից: Հաղարաւոր ակնատեսներ անկարող եղան կրակի առաջն առնելու: Վնասը աւելի քան 5000 բուրբուլ է հասնում:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԻՑ

Կ. Պոլիս, յունվար 5-ին
Իզմիրեան Մատթէոս եպիսկոպոսին անունը արդէն ծանօթ է ձեռքի լիթ ստեղծող հրահարող բողոք չէ այդ անունը, գէթ լուսատու յոյսն է:

Գրեթէ քառօրը դար մըն է որ Իզմիրեան եպիսկոպոսը կանդամակցի հայ եկեղեցականութեան, ժամանակամիջոցը շատ կարճ է սարկաւազութեան մինչև պատրիարքութիւն բարձրանալու համար, կանգ առնելով կաթողիկոսական ընտրութեան կրկնող աստիճանին վրա, բայց հանրային զգացումը պահանջից, որ մեր ղեկավար առաջնորդը ըլլայ Իզմիրեան:

Ինչու այս պահանջուածը — Պատասխանները շատ են:

պիտի հասկցուի թէ ինչու ժողովրդին աչքը յանեցաւ Իզմիրեանի վրա:

Երբ 1891 թուականին Իզմիրեան եպիսկոպոս Աղբային ժողովին անդամ ընտրուեցաւ Կրօնական ժողովին Ալեքսանդր Գրիգորիս եպիսկոպոսին հետ, կառավարութիւնը չի հաստատեց այդ երկուքին ալ պաշտօնը, ինչ որ բնաւ չէր պատահած մինչև այն ատեն:

Ինչ ոճիբ գործած էր Իզմիրեան, որով կենթարկուէր այդպիսի բացառիկ անօրինութեան մը:— Իր յանցանքն այն էր որ 1878 թուականին Կրօնական պատրիարքի կողմէն Էջմիածին գաղտնի էր, հայրապետական աջակցութիւն խնդրելու տառապեալ հայերուն համար: Իրաւ է որ ուրիշներ ալ Եւրոպա գաղտնի, բայց թիւրքերը աններող դրուձուեցան անոր, որուն պաշտօնն էր Հայոց եկեղեցիին պետը Թիւրքիոյ հակապատրիարք ընել:

Ու առկէ զատ. 1879 թուականին Մատթէոս Իզմիրեան պատրիարքական խորհրդական նշանակուեցաւ Կրօնական պատրիարքի նախաձեռնութեան ու հրաժարուեցաւ պատճառով. այդ միջոցին Հայաստան կերթային բարենորոգումներու Յանձնաժողովները, կացութիւնը ձիշտ քննելու և դարմանները խորհելու հրահանգով: Պատրիարքարանին կողմէ պատուիրակ կը կարգուէին Գարեգին Կ. Սրուանձեանց և Վահան Կ. Պարտիզպէցի Տ. Մինասեան. պատրիարքական խորհրդական Իզմիրեան եպիսկոպոս այս պատուիրակներուն գրաւոր հրահանգներ կուտար իրենց պաշտօնին համար:

Այդ հրահանգներու գիրք էր որ Վահան վարդապետը 1891-ին կը տանէր կը յանձնէր ոստիկանութեան նախարարին: Իզմիրեան եպիսկոպոս հրաւիրուեցաւ ոստիկանութեան և դատական նախարարութեան պաշտօնատեսները բացատրութիւններ տալու: Պատասխանները դժուարին չէին, բայց Իզմիրեան նշանակուեցաւ վտանգաւոր թիւրք կառավարութեան և մասնակից հայ քառահինգերու:— Ըստ բացատրութեան Ազգեանի:

Երբ Իզմիրեան 1891-ին ընտրուեցաւ Կրօնական ժողովին անդամ, այն ատեն Ազգեան Խորհը և իր շար ուղին՝ Մազսուտ Սիմոն հարկ սեպեցին իրենց դաւաճանութեանց յողորմութեանը համար շատ պրպտել այն հին յիշատակները, որոնք Իզմիրեան եպիսկոպոսին փառքի լաւագոյն տիպոսներն էին աղբիւր աչքին:

Նախորդ պատրիարքն ու իր Կ. Պոլսիցը լաւ գիտէին թէ Կրօնական ժողովին մէջ իրենց ընդդիմադիր պիտի գտնեն Իզմիրեան եպիսկոպոսը, որուն պիտի աջակցէր Ալեքսանդր եպիսկոպոսը: Ընդդիմադրութիւնը կրնար ծանր կերպարանք առնել և դժուարացնել Ազգեանի և Մազսուտի կացութիւնը: Յայտնի էր նաև թէ երբ Կրօնական ժողովին պաշտօնավարութեան երկու տարուան չըջանը լրանար, Իզմիրեան եպիսկոպոս անմիջապէս պիտի դադարեցնէր ժողովին նիստերը, որպէս զի Սահմանադրութեան հակառակ գործ մը բրած չըլլայ: Անհարին պիտի ըլլար յաղթել Իզմիրեանի օրինաւոր կամակար յամառութեանը: Ուրեմն պէտք էր չարքից արմատը ջնջել:

Ազգեան և Մազսուտ դժուարութիւն չի կրեցին իրենց չարանիւթը խորհուրդը լրականացնելու, առաջ նետեցին Վահան վարդապետը և դատական գործերու նախարարութեան ձեռքով ղեկանցցին Իզմիրեանի և Ալեքսանդրի ընտրութիւնները: Անկէ ի վեր Իզմիրեան իբր դատապարտեալ մը առանձնակ կապրէր: Ազգեանի ու Մազսուտի յարուցած հայածանքը պատուանդանն և դաւ, որուն վրա կոխելով Իզմիրեան կը բարձրանայ պատրիարքութեան գահը:

Բայց հալածանքը միակ արժանիքը չէ որ Իզմիրեանը բարձրացուց պատրիարքութեան: Այդ եկեղեցականը յարգելի ըլլալու գաղտնիքը զտած է: Նախ և առաջ իբր կուսակրօն պաշտօնեայ Գրիգորոսի վարած է անարատ կենանք մը մեր ամուրի եկեղեցականներու խառնակ ապակառուութեան մէջ: Ինքն ալ կէսարի կնոջ նմանեցաւ— կասկածն իսկ չի շօշափեց զինքը: Ուրտ մը ընել, շատ ծանր ուխտ մը ու անոր հաւատարիմ մնալ գրաւական մըն է, թէ նոյն հաւատարմութիւնը անվրէպ պիտի պահպանուի ամեն ուխտի համար ալ:

Եւ արդարև Իզմիրեան եպիսկոպոս համարուած է մեր մէջ անշահանդէր կրօնաւոր. ոչ արձաթսիրութիւն, ոչ շահանդութիւն, ոչ ընչաքաղցու թիւն չեն կրցած թախանցել այդ սրբակրօն եպիսկոպոսին արտին մէջ:

Չենք կարծեր թէ մեր մէջ գտնուի եկեղեցա-

կան մը որ այնքան մոեղանքով սիրող ըլլայ
 Հայաստանայց եկեղեցին: Կարծես մնացորդ մըն է
 է հին դարերու, զերմուանդ հաւատացող մըն է.
 միտքը չէ հասած այն գաղափարները, ուր տարակոյս-
 ներու ամպերը կը սաւառնին: Իր հաւաքին հա-
 մար տան հինգ դարէ ի վեր մարտիրոս եղող
 հայ զիւղացիին ճշմարիտ զգացման է իզմրելեան
 եպիսկոպոս: Մեր եկեղեցական պատմութեան, մեր
 հին մատենագրութեան ուղի է ծածուկը անած, ի-
 րեն համար Ղևոնդեանց պատերազմը երէկ կամ
 առջի օրը պատահած զէպը մըն է, այնքան օղբա-
 րութեամբ կը խօսի: Այդ անկեղծ կրօնասիրու-
 թիւնը իզմրելեանի մեծ ուժն է, որով մինչև մար-
 տիրոսութեան կրնայ տանիլ, զի ապահով է թէ
 արքայութեան մէջ, անկասկած, տեղ մը պի-
 աի կրնայ գտնուի: Երկու անգամ չի կայ իրեն
 համար: Ա. Սահակի դարն ու մեր օրերը միննոյն
 ժամանակն է: Այս շփոթութիւնը թերևս կարգ
 մը է եկեղեցեցիական բարեկարգութեան ց-
 ին զիրենք արդէն արդէն ըլլաւ:

Սակայն ժամանակը եկեղեցական բարեկարգու-
 թեանց չէ: Նշանաւոր օրերու մէջ կարգիւնը Հա-
 յոյ պատրիարքին վրա արտակարգ պարտակա-
 նութիւններ կը ծանրանան. իզմրելեան իր կոչմա-
 նը պիտի համապատասխանէ կը յուսանք:

Եւ սակայն վախ մը ունինք. մինչև որ աստիճան
 գերի պիտի ըլլայ այն օր ի իշխար ի իշխարն, որ
 մեծերի պէս մտ 20 տարի է կը ձգէ հայ ժո-
 ղովորդին արևը: Եւ կը պարտաւանայ: Կը կար-
 ծենք թէ այդ իշխարութիւնն զերծ պիտի մնայ:
 Այդ օրհարարիցան 1894 ժայիս 10-ին երեքշաբթի
 օր մահացու հարուած կրեց Մինն Մազաուտի
 անձին մէջ. երկրորդ հարուածը կրեց զեկեղեցե-
 րի 17-ին, երբ Քաղաքական ժողովին դռները փա-
 կեց Եփեսոսիւնուն առջև. իզմրելեան անուշտ
 պիտի չի թողարկէ որ հայ Եփեսոսիւնները իրենց
 կուրծքին վրա կրնն փայտալուծեան պատուանշա-
 նը, Սասունի սոկորներէն շինուած:

“ՄՇԱԿԻ” ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՈՒՌՄԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

10ՆԻՐՈՆ, 23 յունվարի: Պաշտօնապէս հաղորդ-
 վում է Եսպանիայից, որ խաղաղութեան մասին
 բանակցելու համար եկած իրագործների հաւատար-
 մաթիւնների փոխանակութեան ժամանակ երևաց,
 որ չինական ներկայացուցիչների լիազորութիւն-
 ները չարագանջ անբաւարար են, այդ պատճա-
 րով եսպանական կառավարութիւնը հրաժարվեց
 բանակցութիւններ սկսել և առաջարկեց չինա-
 ցիներին յետ գնալ:

ԽՍԻՐՎՈՎ, 23 յունվարի: Գնահատման տնտեսա-
 ճարտարաբան կարելի է համարել: Շրջանա-
 ստիւթիւնները միջակից ցածր են: Առձեռն դը-
 րամ աւելի պակաս էր, քան անցեալ տարի:

ՊԱՐԻՉ, 23 յունվարի: Monceaux—les—mines
 հանքերում յուսով մին պայծեց գաղթ: Առա-
 շտանան 9 ժամին մտն ու Երգենիայի հանքային
 հանքերին մտն 30 դիմաներ:

ԲՆԻՒՐՆ, 23 յունվարի: Սաքոն—Ալեքսանդր-
 գեան պրինցիպալ նախագահութեան տակ երկու
 յատուկ մասնաժողովը հանդիսարար երաժշտա-
 կան—գրականական երկու լիազմեց ի յիշատակ
 Անտոն Ռուբինշտեյնի: Երկու լիազմեց էր այդ
 կայսրուհին: Դասը լիցք լցված էր:

ԲԵՂԳՐԱՎ, 23 յունվարի: Վճռաջինջ դատա-
 րանը, քննելով Չեղինցի գործը, դատապարտեց
 Չեղինցին, Տախիչին, Գրիպովիչին, և Վիչին
 երեք տարվա բանտարկութեան: Դանիչին, Ռուչ-
 չին, Տաշանովիչին և Ստոնովիչին՝ երկու տար-
 վա բանտարկութեան: Մնացած մեղադրողները
 արդարացրած են:

ՏՈՒՐՈ, 23 յունվարի: Կապոնական պարա-
 մենար ջուէրից մի վճիռ, որով յայտարարվում
 է, որ պատերազմը նպատակը դուռ ևս չէ իր-
 գործված, և որ պարլամենտը պարտաւոր է ջուէ-
 րակի պատերազմը շարունակելու համար ան-
 հրաժեշտ բոլոր միջոցներով:

ՍՕՏԻՆ, 23 յունվարի: Նախկին դիպլոմատի-
 կան գործակալը Վիեննայում՝ Մինիցեվիչ Նշա-
 նակված է արքայազատութեան մինիստր:

Բան լրացուցիչ ընտրութիւններից, 18 արև-
 յաջող են կառավարութեան, երկուսը—գիմարա-
 կան կառավարութեանը: Յանկով, Ստամբուլով,
 Մոզեկանով, Տոնչևի, Գրեմով, Սարաչևիչ պար-
 տութիւն կրեցին: Լրացուցիչ ընտրութիւնների
 ժամանակ մի քանի շրջաններում Յանկովա-
 կաններ, Կարապետիւններ, Ստամբուլի և
 Բազաուովի կառավարիչներ ձայն տուցին ընդ-
 հանուր համաձայնութեամբ որոշված կանդիդա-
 տուրայի համար:

ԲՆԻՐԱՎ, 23 յունվարի: Ստամբուլի հակա-
 ապօրգը Տիրեոլում ստացաւ 248 ձայների մե-
 ծամանութեան: Յանկովի հակաապօրը՝ Նովո-
 Ջլապիւնում յաղթեց 12 ձայնով: Պաշտօնական
 տեղեկութիւնների համեմատ, հանգստութիւնը ոչ
 մի տեղ խանգարված չէր:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յունվարի: Կիրակի բաղդ ու-
 նեցաւ ներկայանալու թագաւոր Կայսրին զինպան
 Լորանով-Ռոստոլցի:

Երկրագործութեան մինիստրը որոշեց՝ եռան-
 դուն կերպով նպաստել դաշտային միւսերի կո-
 տորմանը, ուղարկելով Մերձկովկասու ապարատ-
 ները, որոնք միւսերին կոտորող բացիւններ են
 պատրաստում:

«Новое Время» լրագրի Սոֆիայից ստացած
 տեղեկութիւնների համեմատ, հակառակ պաշտօ-
 նական տեղեկութիւնների, յայտնվեց, որ ընտրու-
 թիւնների ժամանակ տեղի են ունեցել անկարգու-
 թիւններ և բռնութիւններ: Տիրեոլում սրերի օգ-
 նութեանը դիմող օտարիւնութեանը նպաստում
 էր հեծեկազորը: Հասն են վիրաւորվածները: Ընտ-
 րող մասնակցանները թիւրքաց կոմիտարին դան-
 դատ ներկայացրին, անտով թէ պոլիցիան չը թոյ-
 լատորց իրանց ձայն տալ:

ՀՈՍՍ, 24 յունվարի: Իստաբուլի զինպանը
 Բուխարէստում, Կոստ Կուրտօպասի, Պետերբուրգի
 զինպան է նշանակված:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՄԱ

Յունվարի 24-ին

1 օնցիւնի վրա 10 ֆունտ արծէ . . .	92 ր. 90 կ.
Բերլինի վրա 100 մարկ . . .	45 > 42 >
Պարիզի վրա 100 ֆրանկ . . .	36 > 82 >
Ռուկի . . .	արծէ . . . 7 > 42 >
Մաքսային կուպոններ . . .	148 > 25 >
Արծաթ > . . .
Բորսային գիտկոնտ . . .	5 > 70/0
Պետ. բանկի 5% տուս 1 շրջանի > . . .
. 2-րդ > . . .
. 3-րդ > . . .
4% պետական ընտա > . . .
5% օսկեայ ընտա 1894 թ.	162 > 50 >
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ. > . . .
. 2-րդ > . . .
. 3-րդ > . . .
. 4-րդ > . . .
Ներքին 5% առաջին փոխառութ. 22 1/2 . . .	50 >
. երկրորդ . . .	226 >
5% պետական երկրորդ. ընտա. 101 7/8 >
4% ներքին փոխառութեան	96 >

4 1/2 0/0 գրաւ. թղթ. ագն. կալ. բանկի 101 . . .	50 >
Ագն. կալ. Պետ. բանկի խաղաղութ. >
Գրաւ. թղթ.	193 > 75 >
4 1/2 0/0 վկայակ. գիւղ. հող. բանկի. 101 . . .	50 >
4 1/2 0/0 գրաւական թղթեր կալուած. >
Փոխ. կրեղիտ. ընկեր. մետալ.	152 > 75 >
. թղթալ. >
Պետերբուրգի քաղաքային կրեղիտ. >
Ընկերութեան օրվապահները. 101 3/8 >
Մոսկովայի քաղաք. օրվապահներ. 100 . . .	25 >
Օղէտայի	100 > 25 >
Թիֆլիսի	98 > 25 >
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	98 > 50 >
. փոխալիսի	98 > 50 >

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ՊԵՏՐՎՈՎ 3, Կար. Չեղ ուղարկեց «Մշակ»:
 Մինք սխալմամբ զաղարկեցիք էլնք ձեզ լրագրի
 ուղարկելը:

ՕՒԷՍԱ. Գ. Ե. Չը տղարկեցինք, որովհետեւ
 ամբողջապէս անկարելի եղաւ ապագինը:

ԼՕՆԻՐՆ. Մ. Չ. Մտտ մի տարի է արդէն, որ
 չենք ստանում:

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎ. Բարեգործական ընկերու-
 թեան վարչութեան: Ուրախութեամբ կը կատա-
 րենք ձեր խնդիրը:

ՍԵՂԵՅ. Բժ. Չաք. Չեր տուած հասցեով ձեզ
 «Մշակ» ուղարկվում է կանոնաւոր Հարցերը այդ-
 տեղի պատասխանը:

ՅԱՐԻՅԻՆ. Յ. Հախովիչին. «Մշակի» բոլոր
 համարները, յունվարի 1-ից սկսած, ձեզ ուղարկ-
 ված են: Ստուգեցէք այդտեղ պատասխանը:

ԽՈՐԱԳՐ՝ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎ ԲԱՍՆԵՍՄԱՐ

Հրատարակիչ՝ Մ. ՄԵՂԻՐ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

Մ Ե Մ Շ Ե Ր Ա Մ Պ Պ Ա Հ Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն Ն Ե Ր

ՄՕԼՏԻՅՈՐՈՒՄ, ԿՕՐՍԻՎԱ ԿՂՈՒՎՐԱ (ՅՐԱՆՍԻԱ)

Ի ԱԼՕԻՉԻ ԵՒ ԸՆԿ.

Պ. Այլօրին ֆիլիսիպի շերամի որդիների սերմը ձեռք բերել ցանկացողները կարող են
 դիմել Թիֆլիս Կայսերական Կովկասեան Կիւղաւանտեան ընկերութեանը և տիկին Գ.
 Սուլթանովային, Նիկոլայեվսկայա փ. տ. № 39, Սերմը ծախում է 5 և 3 ժախլ պա-
 րունակող արկղիկների մէջ, միւսալը 60 կոպէկով: (№ 9) 1—6

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1895 ГОДЪ НА „Астраханскій Листокъ“

(30-й годъ изданія)

ПОДПИСНАЯ ЦѢНА

Съ доставкой въ Астрахани на 1 г.—7 р., на 6 м.—4 р., на 3 м.—2 р. 50 к., на 1 м.—1 р.
 Съ пересылкой въ города на 1 г.—7 р. 50 к., на 6 м.—5 р., на 3 м.—3 р. 25 к., на 1 м.—1 р. 25 к.

Адресъ: Астрахань. Въ редакцію газеты „Астраханскій Листокъ“. 1—2

ՍՍԼՄԱՍԹԻ ՀԱՅՈՑ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՖԹՎԱՆՈՒՄ

Խնդրում ենք հայ խմբագիրներին, հեղինակներին և բարեսէր անձանց, որ իրանց
 օգնութիւնը չը զանան Սարմասի հայոց այս միակ գրադարանին, որի ձօնացումը ըզ-
 դալի կերպով կը նպաստէ զաւառիս կրթական զործին:
 Խնդրում ենք նուիրատուներին դիմել այս հասցեով. Перица, Salmast, Սալմաս-
 տի հայոց գրադարանին, Հաֆթ վանում:
 Սարմասի Հաֆթ վան գիւղի գրադարանի վարչութեան:
 (№ 10) 1—10

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1895 Թ.

„Շ Ա Ի Դ“

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ ՇԱՐԱԹԱՍԵՐԹ
 (Երկրորդ տարի)

Հրատարակվում է Թէհրանում: „Շաւիղի“ բաժանորդակին է մէկ թուամս, կէս
 տարվանը վեց զուան: Արտասահմանում՝ 3 ռուբլի կամ 8 Ֆրանկ. կէս տարվանը 2 ր.
 կամ 4 Ֆրանկ:

Արտասահմանից դրամական ծրարները կարող են ուղարկել հետեւեալ հասցեով.
 Черезъ Баку, Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ, пер. А. Бекъ-Наза-
 рову. Իսկ նամակներ և թղթակցութիւններ հետեւեալ հասցեով. Téhéran, Rédaction
 „SCHAVIGH“.

Թիֆլիսում „Շաւիղի“ բաժանորդ զրվել ցանկացողները՝ կարող են զրվել Խօսքով
 Արզումանեանի գրասենեակում: 2—2